[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
16	Օգոստոս	2019 թ.		Բ	7411643391
[4] Առաքման ամսաթիվ					
16	Օգոստոս	2019 թ.			

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր — Համար: Ամսաթիվ:
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ավելաց. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 18107419 բ/գ.	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

16/08/2019 16:15:42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

16 հուլիսի 2019թ. **ք. Գյումրի**

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Գ.Գ.Դավթյանս քննարկելով վարույթումս քննվող թիվ 18107419 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2019 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 14:40-ի սահմաններում, Վարդան Սամվելի Գրիգորյանը Ռոման Ավետիսի Գևորգյանի հետ Գյումրի քաղաքի Գերցենի փողոցի 211/214 տնակից զգալի չափերի գույքը գաղտնի հափշտակելու վերաբերյալ նախնական համաձայնությամբ, տեխնիկական միջոցի գործադրմամբ բացել են նշված տնակի մուտքի դուռը, ապօրինի մուտք գործել բնակարան, այնտեղից փորձել հափշտակել ուրիշի՝ Արուսյակ Գալուստի Հովսեփյանի զգալի չափերով գույքը, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չեն հասցրել, քանի որ ստացված օպերատիվ տեղեկությունները իրացնելիս ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ծառայողները նրանց դեպքի վայրից բերման են ենթարկել ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժին:

Դեպքի առթիվ 2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում հարուցվել է թիվ 18107419 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, կատարվում է նախաքննություն:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ Վարդան Սամվելի Գրիգորյանին, Ռոման Ավետիսի Գևորգյանին և Ռոբերտ Բագրատի Քոթանջյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով:

Մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը ցուցմունք է տվել, որ 2019 թվականի հունիսի 18-ին՝ ցերեկը կոնկրետ ժամը չի հիշում, Ռոբերտ Քոթանջյանը՝ «Ծյապիկը», զանգահարել է իրեն ու Ռոմանին և պայմանավորվել են հանդիպել Գյումրու թատրոնի մոտ, սկզբում ինքն է գնացել այնտեղ, որտեղ «Ծյապիկը» մենակ կանգնած է եղել, իսկ հետո նաև այնտեղ է գնացել Ռոմանը, իրենք պատահական տաքսի մեքենայով, որի մակնիշը, հաշվառման համարանիշը չի հիշում, վարորդին չի ճանաչում, գնացել են Գյումրու 211/214 տնակի դիմաց: «Ծյապիկն» ասել է, որ այնտեղից գողություն են կատարելու, իրենք համաձայնել են, նա նաև հավելել է, որ տան տերերը շուրջ երկու օր տանը չեն լինելու, ապա նրա մոտ եղած պտուտակահանով բացել է տնակի մուտքի դուռը, իրենք ներս են մտել տնակի նախամուտքի հատված, ապա «Ծյապիկը» պտուտակահանի միջոցով փորձել է բացել տան հիմնական հատված տանող դուռը, սակայն չի կարողացել ու իրենց հայտնել է, որ դեռ ժամանակ ունեն՝ հաջորդ օրն ինքն ու Ռոմանը գնան, շարունակեն գողությունը: Հունիսի 19-ին «Ծյապիկը» զանգահարել է իրեն և ասել, որ Ռոմանի հետ գնան այնտեղ՝ արժեքավոր ապրանքներ գողանան, որից հետո նա կբացատրի տեղը և իրենք գողացված ապրանքները տանեն տան նրան՝ դրանք կվաճառի: Ինքը հեռախոսի միջոցով կապ է հաստատել Ռոմանի հետ ու փոխանցել Ծյապիկի ասածը, ապա պատահական տաքսի մեքենայով գնացել Ռոմանի հետևից, միասին գնացել են տնակի մոտ՝ ցանկանալով այնտեղից գողանալ ընդհանուր

50.000 ՀՀ դրամ արժողության գույք, երկուսով ներս են մտել արդեն, իսկ նախորդ օրը «Ծյապիկի» կողմից բացած մուտքի դռնից: Իր ու Ռոմանի միջև կայացած պայմանավորվածության համաձայն՝ Ռոմանը սպասել է նախամուտքի մոտ, իսկ ինքը փորձել հանել պատուհանի ապակին նախորդ օրը «Ծյապիկի» կողմից թողած պտուտակահանի միջոցով, սակայն ապակին կոտրվել է, ինչից հետո ինքը տեղահանել է կոտրված ապակու կտորը, ապա բացվածքից ներս մտել, անցել տան խոհանոցի հատվածը, որտեղ պահարան է եղել դրված, պահարանի ներքի դռնից դուրս է հանել պայուսակը՝ ցանկանալով նայել, թե ի՞նչ կա դրա մեջ, որպեսզի այն գողանան, սակայն չի հասցրել, քանի որ ոստիկանության աշխատակիցները եկել են տնակ և իրեն ու Ռոմանին բերման ենթարկել ոստիկանության բաժին: Պնդել է, որ Ռոբերտ Քոթանջյանն է կազմակերպել գողությունը, ինքն այնտեղից մինչ այդ գողություն կատարելու մտադրություն չի ունեցել: Նա է իրեն տարել նշված տնակի մոտ ու ասել, որ այնտեղից գողություն անեն, նա էլ բացել տնակի մուտքի դուռը, իսկ երկրորդը չի կարողացել բացել, իրեն պատրաստվել են գողացված ապրանքները տալ «Ծյապիկին»:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերություն կատարված հարցման համաձայն՝ Վարդան Սամվելի Գրիգորյանը 2015 թվականի սեպտեմբերի 22-ից հաշվառված է կենտրոնի հոգեբուժական դիսպանսերում «Թեթև աստիճանի մտավոր հետամանցություն՝ ուշադրություն պահանջող վարքային փոփոխությունով» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ Վարդան Սամվելի Գրիգորյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245 և 248-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. 18107419 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝

ա/ մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը նախկինում և վերը նկարագրված հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և երբվանից,

բ/ եթե մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարո՞ղ է մասնակցել դատաքննչական գործողություններին,

գ/ մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը ներկայում տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

գ/ մեղադրյալ Վարդան Սամվելի Գրիգորյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը, ինչպես նաև հանրության համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ,

3. Փորձագետներին ներկայացնել Վարդան Սամվելի Գրիգորյանին և քրեական գործի նյութերը:

4. Փորձաքննության ընթացքում եթե կառաջանան հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետի իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Շիրակի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ՝ **Գ.Գ. Դավթյան**